

զրպարտութիւն, զրպարտածների արտասուք և ոչ ոք կար նրանց մխիթարող. իսկ զրպարտողների ձեռքում եւ միայն բռնութիւն տեսայ ու երանի տուի այն մեռելներին, որոնք մեզնից յառաջ հեռացել են այս աշխարհից, բայց աւելի երանի տուի նոցա, որոնք ոչ կենդանի են և ոչ մեռած, այլ աշխարհք անգամ չեն եկել, որ չեն տեսել չար արարածներին արեգական ներքոյ, և տեսայ մարդկանց աշխատանքն ու կուրութիւնը. մերձաւորների մէջ նախանձ տեսայ, որ ունայնութիւն է և յօժարութիւն հոգւոյ, ծն տեսայ թէ ինչպէս անզգամն պոկում էր իւր միսն և ուտում»:

Արդ, եղբարք իմ ի Բրիստոս, սիրելիք և անձկալիք, մարդկային սրտի վերայ հրաւիրեցի ձեր ուշադրութիւնը Փրկիչ Յիսուսի կեանքի օրինակներով ու ցոյց տուի ձեզ այն օձը՝ նախանձը որ կծիկ է դարձել մարդու սրտի լաւագոյն անկիւնում, որ և Աստուծոյ սեղանին է տեղի:

Ո՛վ կտայ ինձ այն թովիչ ձայնը, որ թովէի զայն օձն ու մեր սրտերից դուրս քաշէի: Մէկ դեղ կայ միայն. դիմել շնորհքների բաշխող Աստուծուն սրտաբուղիս աղօթքով և աղերսել որ Նա շնորհաց կաթիլներ սրսկէ մեր սրտերում ու ցամքի, չորանայ նախանձի օձն այնտեղ: Մի կասկածէք թէ անշնորհքն աղօթելով շնորհք չի առնի. հաղարաւ որ են օրինակներ ուր նախանձոտ անշնորհքութիւնը շնորհալի վեհութեան է փոխուել հաւատով: Չեմ աղօթքի միջոցով:

Ս. Յակոբոս առաքեալի խօսքով եմ ասում ձեզ, եղբարք, «զի ուր հեռ և նախանձ, անդ անկարգութիւն և ամենայն իրք չարք»:

Մարմնացեալն Աստուած պահոց օրերի շնորհիւ լցնէ մեզ իւր շնորհքով որ մեզ ճանաչենք և հասկանանք թէ նախանձի հոգը հերոս չի բերի, նախանձոտ ազգը կեանքի գարուն չունի: Ամէն:

Բենիկ Վարդապետ



ՄՈՐԵՍԻ ԿԵՐԱԾ ԱՆՑԵԱԼԸ *

«Էւ հասցոյց ձեզ փոխանակ ամացն յորս եկիւ մարտիս և շորեակն և գրոյնն և խառնիճն»:

Յովհ, Բ. 25:

ՊԺՈՒՆԸ է պատկերացնել այն սոսկումը, որով բռնուեցաւ մի հովուական ժողովուրդ, որ ապրում էր իւր այգիներն և թղենիներն չքե տակ, դաւարագեղ հովիտներում կամ լեռների լանջերն վերայ, որ զարգարուած էին սիրուն նշենիներէ ծաղիկներով ու ձիթենու արծաթափայլ տերեւներով, երբ որ նա՝ կէսօրուայ խաղաղ ժամանակ՝ առաջին անգամ նկատեց մօրեխի քիչ քիչ բազմանալը, որ սկզբում երեւցաւ հեռու դաշտերում և այգիներում: Մարդիկ անակոնթարթ և դրեթէ մոլեգնած աչքերով նայում էին հօրեղանի վերայ, և մենք հազիւ կարող ենք երեւակայել նոցա սրտատրուի յուզումը՝ այն հեռուոր սեւ ընծը տեսնելիս, որ աւելի և աւելի սպառնալեօք ստուարանում էր և հետզհետէ ստանում էր խտացած թուխպ մառախուղի կերպարանը, որ արագ արագ պատում էր երկինքը և մթնացնում էր:

Այս սարսափելի աղէտից խռոված Յովէլ մարգարէն բոլորքէն խօսքերով նկարագրում է իւր գրքում ժողովրդեան ողբը և նոցա խաւարած դէմքը, նորա հիմնաւոր պատճառ ունէին լալու համար. մարտիկից յետոյ եկաւ սով, աւերակ, կործանումն, յուսահատութիւն: Աւելի և աւելի խառնում էր մէգի խաւարութիւնը, ամպ ու մառախուղը պատեց չորս կողմը: Ամէն տեղից լսում էր մի աղմուկ, որ կարծես թէ լեռների գլուխներին առպատակող կառքերի շաշիւնը լինէին: Արեգակը մթնացաւ, իսկ օդը դողաց բազմաթիւ միջատների թւերի սասանմունքից: Այն ժամանակ միայն հասկացան մարդիկ, որ իւրեանց երկրն վերայ մօրեխ է թափուել, և թէ զգացած աղմուկն ու շարժումը՝ դեւղացու համար աւելի սոսկալի թւաւորներն արշաւանք է, քան մահուան հրեշտակի թւաւորութիւնը:

Բանաստեղծ մարգարէի գրգռուած երեւակայութեամբ մօրեխը Տէր Աստուծո անընկճելի մեծ զինուորութիւն է կամ թէ այնպիսի հեծեալներն բազմութիւն, որ կրակի պէս ուտում ճարակում է: Ոչ մի սուր չի կարող խոցել նորան, ոչ մի պարեպ կանգուն չի մնայ նորա առաջ: Այս էր մեծ, արագ, թւաւոր անհամար զօրք, և Աստուծոյ մեծ ձայնը հնչում էր այդ բանակի

* Դարձեալ մի քանի քառյակի որի ամբողջ ժողովածուն շուտով ի լոյս կը հանուի առանձին գրով:

մէջ: Սակայն առանց մոլեգնելու եւս իրօք որ անշտի մեծ էր մորեկի առթած վնասը: Աորան բոլոր այդինները որով ժողովուրդը պարծենում էր, հորաւ հնձի յոյսը, թշուառացաւ ցորենը, ցամաքեցաւ դինին, Արեգակի և անձրևի տակ ծիծաղող դաշտերն ու ձորերը դժոխքան և աղեղացան: Աչքը էլ ոչ մի տեղ չի տեսնում դալարին, խի տապաաակած թշնամու սասիած և կենդանի մարմինները՝ մարդու ստի տակ ճարճառում են, նորա ամէն մի բային:

Թիգենու, նանենու, արմաւենու և խնձորենու ուռը լոնեցած (մերկացած) էին մնացել: Աւնդը արմատով կերել էին խի առաջուայ դալարի դաշտերն այժմ ծածկուած էին փառղ դեղերով: Բնչ որ սովալլուկ մորեկը չէր կարողացել ուտել, այն էլ վարակեց իւր հոսած ապականութիւններով, նորա վնասաբեր բայերը տարածում էին ժանտախտ և սև մահ, նորա զարհուրելի արգասաւոր ծննդականութիւնը ապագայի յոյսն անդամ խալաւ կարում էր: Այն երկերը որ առաջ զբախտ էր մորեկից յետոյ տխուր անապատ եղաւ:

Այն մորեկի գայու օրը՝ Տեառն Աստուծոյ այցելութեան օր էր, մութ, մաւղ օր՝ խոր սև ամպերով ծածկուած: Այդ էր մի դառն, սիրտը կտոր կտոր անող թշուառութեան օր, որի յիշատակը անցել է պապերից հեռաւոր սերունդներին: Եւ որովհետև ֆիզիքական աշխարհի ամենայն երևոյթ իւր համապատասխանող երևոյթ ունի հոգեկան աշխարհի մէջ, արդեօք մորեկը մի աւելի տոսկալի բանի նշան չէ, Այդ այն խորհրդաւոր աղղումն է, որ մեզ միշտ տառնեցնում է, կարծես թէ մթութեան մէջ շար ոգին անցել է մեր կշտով, մի աղղումն որ հեռաւոր նմանութիւն ունի ամենայն գեղեցկութիւն թարշամեցնող վէրքին, ամենայն մաշող բորբոսութեան, կամ այն անէծքին, որ մարդկային կանաչ դաշտերի վերայ շարադրուակ ծանրանում է, որպէս թուանոր ծառի ստուէր:

Այն մարդու համար, որ խղճահարում է մեղք գործելուց, որի մտաւոր աչքը տեսնում է բարոյական աշխարհի իրականութիւնը, անտու լինելը, որ աշխատում է իրերի վերայ նայել Փրկչի աչքերով, որ դատում է ոչ թէ մարդու, այլ Աստուծոյ չափած չափով, նորա համար մորեկի առաջին ասպատակութիւնը գեղածիժող արտերի վերայ՝ երբէք անշտաւ սոսկալի չի կարող լինել, քան շարութեան առաջին փորրադոյն ամօլը՝ որի ստուերը ընկնում է անմեղ գեռահատակ կեանքի վերայ, ամէն մի երիտասարդի կենաց վերայ, ինչպէս որ երբեմն դուք էք եղել:

Մեր երկնային Հօր երեսը տեսնող հրեշտակները տախտակների վերայ դրում են այն

առաջին չար բառը, որ արատանում ենք առանց կարմրելու, այն առաջին երգումը, որով սրբապղծում ենք մեր անսովոր շրթուները, այն առաջին սառնութիւնը, որ մեզ տեսնել է տալիս ահը, որպէս զի ծածկենք սխալը կամ դիտութեամբ պարտադանցութիւնը: Նորա նշանակում են նմանապէս և առաջին չար միտքը, որ յղանում ենք մօր դէմ, և առաջին հարուածը, որ պատճառում ենք հօր սրտին: Նորա արձանագրում են զգաստութիւնից և պատուից առաջին անգամ խոտարումը, շարութեան գիտութեան ծառից ճաշակելու և իբրև ամառածներ դառնալու ցանկութիւնը, նաև շշուներ, թէ «դու չես մեռնի», «ոչ եթէ մահու մեռանիցի», նորա տեսնում են և առաջին անձնահաճ արարքը, որով մոլորութիւնը ժխտում է ճշմարտութիւնն ու արդարութիւնը և զրեթէ զրօշակ է բարձրացնում Աստուծո թշնամներու շարքերում:

Մենք կարող ենք մոռանալ այդ առաջին գիտակցական շարութիւնը, ինչպէս որ մորեկի առաջին դուժաբերները մոռացուեցան ուրիշ հազար հազարներէ երևելովը, ինչպէս որ մոռացուում է չորացած տերեւը բռնկեցնող առաջին կայծը, երբ որ տխմահեան բոցով է բռնելում ամբողջ անտառը: Բայց հրեշտակներն այդ բանը չեն մոռանում: Զի մոռանում և Աստուած: Նայ որ տեսնում է դալարեալ ծառի ցաւ մաքումը, անշուշտ տեսնում և նշանակում է այն մեղքը, որ տերանալով մեծ յոյս տուող նորարողութիւններ, անոր արմատը դառնացնում է, խի ծաղիկները փռու պէս ցրում է: Նա տեսնում է, թէ ինչպէս չարքեն տնում և բազմանում է, թէ ապականութեան սերմը մահաբեր պտուղներ է հասցնում, մինչև որ արտը խալաւ անապատանում է, խի հոգին, որ Աստուծոյ գրախտ է, խաւարում և պղծում է, ինչպէս Հիննոմի հովիար՝ և մահուան հովիար:

Ո՛հ, եղբար, մի խաբուիք: Աստուծոյ հետ հանաք անել կարելի չէ: Եւ գիտեմ՝ որ նորա ձեռութիւն է դարձել մեղքի մասին շատ մտածելը, բայց այդ միայն խօսքով է: Եւ գիտեմ, որ ի մանկութենէ ամէնքը աշխատում ենք հանգիստահան հաղուտ հագնել, բայց այդ բանը լսի վերնագարդ է, որ վերջը կպչում է մեր մարմնին և մաշում է մեզ, ինչպէս առասպելական «թուխաւոր շապիկը», Եւ գիտեմ թէ ինչպէս համարձակ և հեշտ կերպով ծիծաղում ենք ճախանդներին, վերայ, որոնց որ մենք կեղեքել ենք, չերկտաներին վերայ, որոնք որ մեզ հետ անառակութիւն չեն դործում, «ծոյլերին» վերայ, որոնք որ մեզ չեն ստրկանում, ամբարիշտներին:

վերայ, երբ որ կարծում ենք, թէ Աստուած օրհնում է մեր պղծութիւնները, Սիրելիք, ձեր սիրտը քննեցէ՛ք, արդեօք վարագուրով չէ ծածկուած այդ սիրտը, արդեօք չէ՞ք ընդարմացել աշխարհային դուրսկեցութեան մէջ, հոգեկան մահացու անդգայութեան մէջ, մեղքին քաջալերելու հանդերձութեան մէջ, որ մեր շատերի կենաց անէծք և նոյովք է դարձել:

Եթէ մեր մէջ կան մարդիկ, որոնց Աստուած պատժել է այդպիսի կուրութեամբ և թոյլ տուեց նորա խղճին, որ բնէ, թող էլ չապասէ մեղանից քաղցը խօսքեր և սուտ գուշակութիւնների մարդարէութիւններ:

Երբ որ նորա դատաստանի օրը գայ, և աշխարհային թատրոնում ջահերի լոյսը ընդ միշտ հանգչի և մթնանայ, երբ որ պատրուկական բռնութենների փոխարէն նորա առաջ մերկանայահեղ յաւիտենական իսկութիւնը, — ինքնախաբու թիւնը կը վերջանայ, և խղճի մահացու քունն ընդ միշտ կը խախտուի: Այն ժամանակ ամենայն մեղաւոր կուղենայ, որ Եկեղեցու պաշտօնականների քարոզները լոկ միայն թոյլ, անդոյն պայմանաւոր ճառախօսութիւններ չլինին ուղղափառութեան մասին: Ո՛չ, թող որ քարոզչի ձայնը բարբառէ և հնչէ փողոց եղջիւրի պէս, որ երբեմն ձիող լեռների գագաթները սասանեցնում էր:

Չեղանից շատերը, սիրելիք, էլ երկաստորդ չեն: Մենք արդէն բոլորել ենք մեզ վիճակուած կենաց մեծ մասը, և ժամերի օրերի, շաբաթների սայլը միշտ դարձեալ թաւալում է յառաջ գէպի խաւար գետը, անյայտ երկիրը, Սայլը մեզ տանում է այնպիսի ճանապարհով, որով երկրորդ անգամ անցնել էլ չենք կարողանայ, Լուսնի վառ, բայց մեր կենաց մեծագոյն և նշանաւորագոյն մասն օրդէն ընդ միշտ ճանապարհորդել ենք, Անցածն արդէն անցել է, ոչ ջնջել, և ոչ դարձնել հնար չկայ:

Մի և նոյն ջրի մէջ մարդ երկու անգամ չի ընկղմում և լողանում, մի և նոյն ժամանակում մարդ երկու անգամ չի ապրում: Անցեալը անյայտացաւ հեռաստանի մառախուղի մէջ, մեզ համար ընդ միշտ անյայտացաւ, լոկ մի թոյլ յիշատակ թողնելով իւր մասին, Բայց Աստուած ընդ միշտ պահել է անցեալը, որով գնացած-եղածը մըշտընջենական անբախտելի իրականութիւն է դարձել: Մենք արդէն ապրել ենք այն վայրկեանները, որ մանուկն իւր մասներով կարող է թուել, և այն յարահայտով մշտանորոգ վայրկեաններից մեծագոյն մասը, որ Աստուած մեզ շնորհում է: Մեղանշական մտածմունքը արդէն ցանկութեան են փոխուել, իսկ ցանկութիւնները արաւայտուել են արարքներով, Վերջապէս բարբերն ևս դարձել են ոռոգրութիւններ, այսինքն գծիւրի կողպէքներ և ցանկապատ, որ միայն Աստուած կարող է բանալ, Միայն Աստուած և այդ մար-

բանն: ¹ Այս շատ նշանաւոր խնդիր է:

Նոր տարուց յետոյ այս առաջին կիրակի օրը դառնանք գէպի յետ և տեսնենք մեր ունեցած կեանքը: Տխուր է այս շրջաճայեացքը, նոյն իսկ մեղանից լաւագոյնների մէջ, Մենք արդէն հասել ենք հեռաւոր լեռները, որ մեզ այնպէս կապոյտ և վալլուն էին թուում, և անոնց ցուրտ, լպրծուն և գագաթներից հիառթափ նայում ենք մեր անցած ճանապարհի վերայ: Եղբարք, լաւ խորհեցէք, թէ մեղանից շատերի համար ինչ է եղել այդ ճանապարհը, Այդ տարիները կարծում էինք, թէ արքայութեան գրեթե պետի լինին — բայց արդեօք տխուր անապատին չհանգիպեցանք: «Առաջ նորա հուր ծախիչ, և վերջ նորա բոց բորբոքեալ»: ² Իսկ այս բանը պատահեց այն պատճառով, որ մեր մեղաց մօրեկսային զօրութիւնները թափուեցան գեղեցիկ դաշտերը, որոնք անշուշտ պայծառ և դալար կու մնային, եթէ մեր բարի ցանկութիւնները նման չլինէին առաւօտեան ամպին և կանուխ ցօղին: Մեր մեղաց մօրեկի զօրութիւնը մէկիկ մէկիկ առած՝ դարդակ բան է, բայց անընկճելի է, երբ որ միտսին է ժողոված: Բայց թէ՛ մէկ և թէ՛ միւս գէպըում կորտաւեր և զդուելի է:

Ինչո՞ւ անցեալի շրջաճայեցողութիւնը շատերի համար այնպէս ցաւալի է: Ինչո՞ւ նորա պատրաստ են ոչինչ չլինայել, նոյն իսկ կեանքը ապլ, միայն թէ կարողանային դարձնել իրանց կորուստած տարիները: Արդեօք ոչ այն պատճառով, որ «ետուն ժանդոյ զպատու իւրեանց, և զլիստատիւ իւրեանց մարախոյ»: ³ Քանի անգամ աղօթել ենք, որ աւելի լաւանանք, աւելի ուրբ լինինք և աւելի վսեմ: Քանի անգամ մօճել ենք խուռափել այս ու այն հրապուրեց, մարտնչել այս ու այն փորձանքի գէմ: Քանի անգամ ցանկացել ենք թողնել չար ոռոգրութիւնները և փոխել մեր անձնապաշտական կենցաղաւարութիւնը: Բայց ինչպէս յաճախ անուշագիր թողնելով խղճի խայթը, մոռանալով աղօթքը և խախտելով վրձիւը, մենք կրկին դարձել ենք մեղքերին, ինչպէս շունը իւր փոխածին կամ լուացած խողը իւր սիրած աղբին:

Այստեղ անշուշտ կան այնպիսիք, որոնց մեղանշական մտածմունքը արդէն ցանկութեան են փոխուել, իսկ ցանկութիւնները արաւայտուել են արարքներով, Վերջապէս բարբերն ևս դարձել են ոռոգրութիւններ, այսինքն գծիւրի կողպէքներ և ցանկապատ, որ միայն Աստուած կարող է բանալ, Միայն Աստուած և այդ մար-

¹ Բ. 25.

² 3.

³ Սաղ. 2Է. 46.

դու հողին գիտեն, թէ արտաքս մեղքն ու յան-
ցանքը ինչ խաւար հեաքեր են թողել այդ հողու
մէջ, և թէ ինչպէս այն տեղ ոչնչացել է ամե-
նայն գեղեցիկութիւն, թուլացել է զօրութիւնը,
թունաւորել է մաքրութիւնը: Գոցա վարկապար-
զի կենաց մասին կարելի է նոյնն ասել, ինչ որ
ասուած է խորայէլացոյ սց դաշտերի համար.
«Զմնացորդս խառնճի եկեր մարտիս, և զմնա-
ցորդս մարտիս եկեր ջրեանի, և զմնացորդս ջո-
րեկի եկեր գրուիմ»:

Արարական առաւելաւոր խօսքը, թէ «երե-
ւոտարդութեան յիշատակը լսի հառաչանք է»,
ախտը ճշմարտութիւն է յայտնում. Եւ ասած-
նեքեց արդէն յայտնի է, որ այդ ուղիղ է: Տխուր
բան է շրջահայել անցած տարիները և դիպել, որ
մեր գործերը ոչինչ արդիւնք չի ծագել կամ՝ որ
աւելի վատթարացոյն է՝ երանի թէ անոնք բնաւ
եղած չլինէին. ախտը բան է գիտնալ, թէ մենք
վատ սերմ ենք ցանել մաշուած հողի մէջ, և թէ
այժմ այդ բանի հունձն ենք հնձում, թէ մենք
զարհուրելի պարագ ենք արել, իսկ բնութիւնը
անգութ պարտատէր է: Թէ մենք մեր գեղեցիկ
երկատարդութեան օրերը դործ ենք անել ան-
խուսափելի վիշտ և թշուառութիւն պատրաս-
տելու մեր կենաց եկող տարիներին համար, Այս
չեմ ծածկի, այս գիտակցութիւնը մեծ թշուա-
ռութիւն է, արտասուալի վիշտ է մեզ համար:
Սակայն թող այդպէս լինի. տարիներն արդէն
անգարծ անցել են: Այս ցաւին էլ դարման չկայ:
Ինչ որ եղաւ, պէտք է լինէր: Այդ պատկանում
է Աստծուն, ոչ մեզ. նոյն իսկ անհուն օգը մըշ-
տապէս պիտի ստանի այս մեր ասած խօսքերից:

Լուսի ճառագայթները եթերի թրթռմամբ
միշտ և շարունակ կը տարածեն մեր արտաքինների
պատկերը մէկ աշխարհից միւս աշխարհները: Այն
բոլորը անցել է, և մենք ոչինչ փոփոխել չենք
կարող: Յետ ենք նայում և միշտ հառաչում
ենք, երբ որ յիշում ենք մեր յիմարտութիւնը,
չարութիւնը, անդգամութիւնը: Այս մի ախտը
պատկեր է, բայց հնար չկայ ջնջելու, ապա ու-
րեմն ամենամեծ անմոտութիւն է անդադար
տրամել այդ բանով: Աւելի անշահ և անօգուտ
բան չկայ, քան անդարմանելի վշտակրութիւն
և ցաւակցութիւն: Օգտաւէտ է երբեմն սխալ-
ներով բարդուած անցեալը շրջահայել, բայց կա-
րիք չկայ երկար զբաղուիլ այդ բանով, եթէ չենք
ուզում մեր հողուն անօգուտ վիշտ և վտանգա-
ւոր յուսահատութիւն պատճառել: Եթէ ես շա-
տերիդ մատնացոյց արեցի ձեր անցեալի պղտոր
ամպերի վերայ, այդ այն խորհուրդով եղաւ, որ
ամէնքս կորոզանանք նայել այն ծիածանի վե-

րայ, որ Տէր Աստուածը իւր ողորմութեամբ
երկեցնում է մեզ շրջապատող խաւարի մէջ:
Ապա ուրեմն համարձակ սրտով երեսը դարձնեք
անդարմանելի անցեալից և դառնանք ամենայն
ապագային:

Ճանապարհից դիշեր ժամանակ մոլորուած
ուղեորը՝ կայծակի վաշխատակմամբ՝ յանկարծ
լուսաւորած է տեսնում շրջապատող ժայռերն
ու անդունդները և մանաւանդ իրան անմիջա-
պէս սպառնացող վտանգը և զարհուրած մնում է
իւր կեցած տեղը մինչև արշալոյսը: Երբ որ արե-
գալը փարտաւած է խաւարը և ուղեորը իւր
քայլերի հետքեր է գտնում անդունդի բերանի
եզերքում, երբ որ տեսնում է տեղաշարժ եղած
և թուլացած գերանը, որով հեղեղի մի ափից
միւս ափն է անցել, նա խոր հառաչանքով վեր
է կենում, զոհութիւն է մատուցանում Աստու-
ծուն, և գոտեւորելով առ ստեամբքն, գնում է
վտանգ անապարհով, աւելի խոնարհ, սուրբ,
խրատուած, և մտախոհ դարձած: Այսպէս և
մենք, սիրելիք, համարձակ սրտով ծածկենք աչ-
քերը մեր անօգուտ կերպով վտանգ թողր ան-
ցեալ տարիներին վերայ և մաղթելով, որ նոր
դարուն ծագի մեր որտեւ և լուսաւորէ մեր
ղղջման ճանապարհը, երթանք մեր ունեցած բո-
լոր եռանդով դէպի մեր բարձր կոչման նպա-
տակը:

Թող մեզանից ոչ որ չյուսահատուի, որչափ
որ սասափի եղած լինին այն տարիներում առ-
պատակած մորեկի բոյները, որչափ որ աւերած
լինին նոքա մեր անօգուտ, անկարգ մանկութիւ-
նը, մոլի և կատաղի պտտանեկութիւնը: Ինչու
է շնորհել մեզ Աստուած ժամանակի պարգևը,
եթէ ոչ զղջալու համար: Մեզ համար, անցեալ
մեղաւորներն համար, զղջումը ամբողջ կենաց
գործ է: Իւրաքանչիւր նոր օր մեզ տրվում է ոչ
թէ աւելի հարստանալու, աւելի մեծատուն
դառնալու համար, ոչ թէ յարմարացոյն և հա-
ճելի կենք վարելու համար, այլ որպէս զի մեր
հողին հաշտուի Աստծու հետ և դարձեալ բն-
գունելի դառնանք նորա փարախում, որտեղից
որ փախել ենք: Անցեալը խաւար է: Ինչ ա-
նենք, Իսկ մեր առաջ ապագայ կայ. մեր ապա-
գան կարող է անմեղ, երջանիկ լինել, այն կա-
րող է աւելի ազնիւ, աւելի անարատ, աստուա-
ծանման լինել: Ստացէք ձեր ապագան զոհացո-
ղական աղօթքով, շնորհակալութեամբ, և մէկդի
ընկեցէք թառամած անցեալը: Արկին ցանեցէք
և այգի ձգեցէք սրբապղծած գետնի վերայ: Կա-
րել է թէ հունձը մեծ չլինի և քիչ ողկոյղներ
լինին կենաց ամենաբարձր ծիւղերի վերայ, բայց
ամենայն ջանք գործ դրել, որ մնացորդը դար-
մանես մորեկի ասպատակութեան հետքերից:

Արա այն, ինչ որ արեց Իսրայէլը, երբ որ բոյ-
լեւը զեօթին իջան: Նա յիշեց, որ Աստուած
մի անգամ մեծ հողմ է առաքել, որով հալածեց
մորեխին, և այդպէս միջանակն ընդ ընդ
խեղաւեցան Վարմիր ծովի ալեքներում: «Պա-
տառեցէք զսիրտս ձեր, ասում է մարգարէն, և
մի՛ զհանդերձ» 2, և զարձէք ձեր Տէր Աստուծոյն,
վասն զի՝ Նա գթած և ողորմած է, երկայնամիտ
և բազումողորմ է և զղջանում է չարեաց: Եւ
մարդիկ զարձան առ Աստուած, Մտադրու-
թեամբ լոնցէք Աստուծոյ ամենազուտ պատառ-
խանը: «Քաջալերեաց, երկիր, խնդա և ուրախ
լիւր, զի մեծացոյց Տէր զառնել իւր ընդ քեզ...
Եւ լցցին կաւք ցորենոյ, և զեղցին հնձանք գին-
ւոյ և իւղոյ: Եւ հառուցից ձեզ փոխանակ ամա-
ցըն յորս եկեր մարախն»: 5

Բայց մի նշանակութեամբ այդ տարիները
էլ չեն կարող նորոգուիլ, Մենք կարող ենք ունե-
նալ նոր տարիներ, «խամ զաշանք և նոր ար-
տասեղիներ», բայց ոչ հները, 2են վերադառ-
նայ և մեր կորած զանձերը, որոնք կարող էին
զարգարել այն տարիները: Մենք երբէք չենք
կարող այն լինել, ինչ որ եղել ենք մինչև մե-
ղանշելը: Խոտովաններ այս խիստ ճշմարտու-
թիւնը, մեղքերի ներումը չի կարող լինիլ միան-
գամայն և անոնց հետևանքների ներումն: Ինչ-
պէս որ, շատ փշաքանդ կեանքի օրինակներից
գիտենք, Թողութիւն ստացած մեղաւորը երբէք
չի կարող ունենալ այն խոստացեալ ազատու-
թիւնը, այն լիութիւն աներկեանութիւնը, որ ան-
մեղի յատկութիւնն է կազմում: Մի օրուայ, մի
ժամուայ, մի վայրկեանի մէջ մենք կարող ենք
ոչնչացնել, ինչ որ երկրի վերայ էլ ոչնչով չի
ուղղուի:

Քանի մարդկանց ըսպէսական մեղքը ամբողջ
կենաց յուսահատութիւն է դարձել, եթէ մա-
հացու վէրքերը, ըստ ողորմութեան Աստուծոյ,
նաեւ առողջանան, այնու ամենայնիւ աղեղ
սպիները կու մնան մեր հողու մէջ, մինչև որ
անգութ մարդու չար մատը միշտ կարող է ցու-
ցանել այդ: Բայց փառք Աստուծոյ: Նա առելի
մեղմ է, գթոտ է, համբերող է չնչին մարդուց:
Երբ որ մեղ անօգնական է թողնում մեր հայրը
կամ մեր մայրը, Նա է մեր ձեռքից բռնում:
Որչափ որ ցած ընկնենք, Նա իւր պայծառ եր-
կնքից խնայողութեամբ է գէպի մեղ, եթէ մենք յու-
զած կեանքից յետոյ գիտում ենք՝ նորան, Երբ
որ մենք կարօտելով կարօտում ենք՝ նոյն իսկ
խոզի կերած եղջերենին, այդ ժամանակ ևս Նա

բայ է անում իւր զիբիւր մեղ համար և դարձած
մոլորեալ որդոց պարանոցին վարելով՝ լաց է լի-
նում: Հէնց այս բանի համար էլ մեռաւ Քրիս-
տոսը: Նա, Որ նստել է մաքսուորի սեղանին,
չի վախեցել բոքոտի վէրքերից, երեսը զգուանօք
չի դարձրել վայրագ, աղաւաղ գերդեհացուց: Ար-
ներողամտութեան ձեռք է մեկնել տաճարի յա-
տակի վերայ լացող շնացող կնոջը և տակ է ան-
ձառելի հեղութեամբ. «Եւ ոչ ես դատապոր-
տեմ զքեզ, երթ, յայտ հեռէ մի՛ մեղանկար»: Ար-
անասակ կնոջից եօթը գէ հալածելով՝ թոյլ
է տուել, որ իւր օտերը նորա արտասուքներով
լուացուի և նորա մայրերով սրբուի — մեղ էլ
կընդունէ, ողորմութեամբ կը սիրէ և կը ներէ:
Մենք հարկ չունենք մարդկանց մասին փոյթ ու-
նենալու, երբ որ Նա մեղ ներում է: Իսկ Նա
ներում է մեզ: Յաւիտեանական Սուրբը գէպի մեղ
է կարկառում Իւր ձեռքը և նորից ծաղիկներ է
տալիս մորեխի կերած տարիները:

Նա մինչև իսկ մեղքի յիշողութեան ծան-
րութիւնը թեթեւացնում է: Երբ որ մենք կենաց
գետի մէջ լող ենք տալիս, երբեմն յանկարծակի
յիշողութիւնը վեր է կենում ծածկուած խորու-
թիւնից, և պղտոր ջուրը լցվում է մոռացուած
մեղքերի անթիւ պատկերներով, որ առատելա-
կան հաւերթահարման պէս ջրից մեղ սպառ-
նում են և մեր մահն են մարդարեանում: Բայց
Աստուած մեղ զօրութիւն է տալիս, որ անխռով
նայենք այդ պատկերների վերայ և շնորհակալ
յուզմամբ տանք. «Այդ իմ մեղքերը չեն, այդ
իմ անցեալ մեղքեր են, որ թողութեան են ար-
ժանացել: Այդ իմ ծանր բեռն էր, բայց այժմ
բեռնած են իմ Փրկչի խաչի վերայ: Այդ բոլորը
ցուցակի մէջ գրուած էին իմ գէմ, բայց Նա
ջնջեց ցուցակը: Այո՛, ես գործել իմ այդպիսի
արարքներ, բայց այժմ լուացուած, մաքրուած,
սրբուած եմ»: Մենք մեր հրաշալի ողբերգու-
թեան թաղութեամբ պէս ասում ենք, թէ «հին
ովկիանի բոլոր ջրերը» չեն կարող լուանալ մեր
յանցանքի բեռը, և թէ «ոչ խաշխաշ, ոչ ման-
րագոր և աշխարհի ոչ մի ուրիշ քնարեք հեղա-
նիսթ» չեն կարող քնայնել մեր վեր կացած յի-
շողութիւնները: Այս ճշմարիտ է: Սակայն Քրիս-
տոսի անգին արեան մի կաթիլը կարող է ընդ
միշտ սրբել մեզ: Աստուած ձայնով ասած՝ նորա
մի խօսքը, թէ «Երթ խաղաղութեամբ», կարող
է լուսնի յուզուած խղճի կատաղած մըրկը և
կէս գիշերուայ յուսահատութեան մէջ՝ զառնալ
խեղութեան երգ:

Բայց մի մոռանալ, եղբարք, որ մենք ան-
գործ նստել չենք կարող: 2լինի թէ ազէտալի
միամտութեամբ երեւակայնեք, իբր թէ մենք կա-
րող ենք մեղքերի մէջ հանգիստ մեռնել և ընդ

1 Եթ, Ժ. 12—20:

2 Բ. 13.

5, 21, 24, 25.

նմին իսկոյն մանեւ երկնքն դռները, իւր թէ հոգին կարող է երկրից հեռանալ առանց թողութեան, առանց զգջալու, ապականուած և կորած, և իսկոյն առանց այլ և այլութեան տեղ դանել Արարչամբ զոգի մէջ: Այս միտքը սարսափելի մոլորութիւն է: Երբ որ մօրեկը դալիս է, ժողովուրդն իսկոյն մեծամեծ խորոյններ է բորբոքում, խոր փոսեր է փորում և օր ու ցերեկ աշխատում է, սառակեցնելով մորեկը, և բարձրագոյն Աստու օգնութիւն է կանչում: Մենք էլ պէտք է դիմենք առ Աստուած, և ալ զբանք է կատարենք այժմ իսկ, որովհետեւ եթէ և յանկարծ չկոչուինք, այնու ամենայնիւ տարին տարուանից յետոյ անցնում է, որպէս ծովը թափուող հեղեղ, և ժամանակը արագ արագ մեղ մղում է իւր անգիմադրելի ալիքներով: Ժամեկն անցնում են և յանդիմանում են մեզ: Ժամանակ չկորցնենք անցեալի մասին զուր ողբ ողբալով: Առաջ գնանք այն հին ժամանակի մեծ զօրավարի պէս, որ երազում աչքը յետ դարձնելով՝ տեսաւ իւր յետնից եկող մի ահագին հրէշաւոր ճեւաղ, օձերի մէջ փաթթած, որի ամէն մի քայլի հետ շուրջը ամենայն ինչ խորատակում դատարկում էր զգրգոցով: Զօրավարին հրամայել էին գնալ շեշտակի առաջ, առանց երեսը շրջելու, և գնաց նա հնազանդութեամբ դէպի փառքն ու յաղթութիւնը: Մենք էլ շեշտակի գնանք, յաջողութեան հաւատով: Եթէ մարդիկ վեր կենան մեր դէմ, — Աստուծոյ սէրը մեզ կը փրկէ նոցա անգութ գոռողութիւնից: Եթէ մեր խիզճն ուղենայ մեզ սարսափեցնել, — Աստուծոյ գթութիւնը մեզ ապաստան կը լինի: Եթէ անցեալը մեր դէմ դնուի, — մենք կերթանք ապահովութիւն գտնելու մեր ներկայ անմեղութեան մէջ, որ Աստուծոյ ողորմութեամբ՝ ունինք և կունենանք: Մեզ սպասում է մեծ յաւիտենականութիւնը, որի ոսկի դռները տակաւին չեն փակուել մեր առաջ և հաւատարապէս լայն բացում են զգջացող մեղաւորներին համար և անարատ սրբերի համար: Տայ Աստուած, որ օրենթաց տարիներ ունանալուց յետոյ, երբ որ ծովը կամ կանաչ խորը կը ծածկեն ձեր ամէնեղ աճիւնը, ձեր անմահ հոգիները միմեանց հանդիպեն և իրար ճանաչեն այն տեղ, ուր որ արաշխարածները, անմեղութեան սպիտակ հանդերձներով, տալում են առանց մեղանշելու և վշտանալու այն քաղաքում, որի հիմքը դրել է Ինքը Աստուած: Եթէ ոչ երկրի վերայ, դէթ այն տեղ վերջնականապէս կը վարձատրէ Աստուած խանարհ, զգջացած մեղաւորներին՝ այն տարիների համար, որ կերել է մօրեկը:

Ս. Ս.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՈՒ ԵԿԵՂԵՑԻ.

— Церковный Вѣстникъ շաբաթաթերթը յունուարի 4-ին բաւրեց իւր 25 ամեայ շրջանը: Այս առթիւ 1899-ի վերջին համարի յօդուածներն ամբողջովին նուիրուած են շաբաթաթերթի 25 տարուայ գործունէութեան: Նախ ընդարձակ առաջնորդող յօդուածի մէջ մէկ մէկ յիշատակում է բաւորդ դարի ընթացքում Ռուս ժողովրդին մատուցած ֆառայութիւնները, ապա խմբադիրներին համառօտ կենսագրութիւնը, առաջին համարի բովանդակութիւնը և յօդուածներին վերնագրիւնները, և վերջոյ մի ցանկ, որից երևում է, թէ ուր և ինչ չափով տարածուած է:

Մի կողմը գնելով մանրամասն հաշիւը, յետադարձ 25 տարուայ շրջանում՝ Церк. Вѣс. մատուցած գլխաւոր ծառայութիւնները—1) երկար և զօրեղ հակահառութիւն է վարել պապական ռանձգութեանց դէմ՝ Ատաղկանի ժողովից յետոյ և Գերմանիայի՝ կաթոլիկական կուսի դէմ: 2) Բալկանեան թերակղզու քրիստոնէից պաշտպանութեան համար հանդանակութիւն է արել նիւթական օգնութիւն հասցնելու համար և մինչև վերջը ռուս հոգևորականների մեջոցով աշխատել է վառ պահել ժողովրդի համակրութիւնը դէպի նեղեալ հաւատակիցները: 3) պահպանողական, գրական ուղղութեամբ հեռի է պահել Ռուս հատարակութեան հոգևոր և ընթերցող դասը Նիճիլիտաների բարոյութիւններից և ձգտել է մտքի ու սրտի խաղաղութիւն վերականգնել շիթութեան ժամանակներում: 4) Խաղաղասէր կայսեր կաշին առաջին արձադանքը տուց և մեծապէս ձեռնառու է հանդիսացել կրթական գործում՝ մի կողմից գործի հրաւիրելով Ռուս հոգևորականութիւնը, միւս կողմից մանկավարժական օգտակար խրատներ և յօդուածներ տալով: 5) Հոգևոր սնունդ մատակարարելու համար հրատարակել է Բալկան Ոսկերեւոյնի գործերը մի քանի տիկնոջ 10,000 ռուբլի նուիրութեամբ, աղքատ եկեղեցականներին մատակարարելով վաճառելու համար: 6) Աղանդների և հերձուածների դէմ միշտ կռիւ է մղել և մեծապէս նպաստել զբանց առաջն առնելուն: 7) Церк. Вѣс. է եղել, որ առաջին անգամ միտք է յղացել նոր տարին զինուորել ոչ ուրախութեան սեղանի առաջ, այլ եկեղեցում շնորհակալութեան մաղթանք առ Աստուած, Այդ առաջարկութիւնն արդէն հաստատուել է մայրաքաղաքներ-